բացայ, և ոչ տեսի զարդարն արհամարհեալ և ոչ զզաւակ Նորա թէ մուրանայ հաց։»

Աղքատը մտածեց. «Ահա ես արհամարհուած եմ Աստուծոյ առաջ, բայց ոչինչ չար գործ չեմ բռնել։ Գնամ քահանայի մօտ, հարցնեմ Նորանից թէ ինչպէս է որ այս անճիշտ է գրուած Սուրբ Գրքում։

Գնաց քահանայի մօտ.

Քահանան տեսնելով Նորան, մտածեց. «առաջին անգամ այս աղքատը եկաւ ինձ մօտ», և տուաց Նորան բոլոր հազար ոսկին՝ որ յանձնել էր իրան հարուստը։

ԱՍՈՒՄԵՆ ՄԻԱՑՆ.

Ո՞ր ուսումնական բանիբուն մարդը,
Կամ ուսումնաւարտ երիտասարդը
Չէ ասել խօսքով և չի էլ ասում՝
Կրթութիւն է պէտք տգէտ գիւղացուն։

Առ-առ-դեն դ-ոյն. բայց գեղջուկ տղան
Դարձեալ է միշտ նոյն թշուառ դրութեան.
Դպրոց չէ գնում, ուսում չէ առնում,
Եւ այդպէս էլ նա անկիրթ է մնում։

Ո՞ր մի ընչաւէտ վաճառականը
Առանց բանալու քսակի բերանը՝
Չէ պնդում տանը, հրապարակում,
Թէ պէտք է օգնել աղքատ գիւղացուն։

Առ-առ-դեն դ-ոյն. բայց խեղճ գիւղացուն
Երբոր խանութի միջին են կտնում,
Խօսքը՝ խօսք է միշտ և խօսք է մնում,
Վաճառականը շահն է մտածում։

Ո՞ր արհեստաւոր մեր քաղաքացին
Տեսնելով խեղճուկ գիւղացիներին,
Ամենքի մօտ էլ չէ պնդում, ասում՝
Թէ արհեստ է պէտք գիւղացու որդուն։

Առ-առ-դեն դ-ոյն. բայց երբ գիւղացին
Առաջարկում է հենց նոյն վարպետին

Իւր գեղջուկ տղան աշակերտ առնել,
Վարպետը՝ այլ մարդ՝ չոր կուռք է դարձել։

—

Ո՞ր կալուածատէր հարուստ իշխանը
Խօսքով չէ բացել քսակի բերանը,
Իւր ընկերների, ընտանեաց մօտը՝
Չէ քաշել մեր խեղճ գեղջկի կարօտը։

Առա՜ջն դէպ, բայց երբ գիւղացին
Դիմումէ այդ իսկ վսեմ իշխանին,
Թուք ու անարգանք է տեսնում նա միշտ,
Եւ ամենից շատ՝ նրանից է կրում վիշտ։

—

Ո՞ր մի բժիշկը միշտ կարեկցութեամբ
Հոգոց չէ հանել գիւղացու համար,
Չէ խոստովանել և չէ խոստանում՝
Թէ պէտք է գթալ թշուառ գիւղացուն։

Առա՜ջն դէպ, բայց երբ գիւղացին
Աղաչում, խնդրում է մեր բժշկին,
Օգնել մինուճար իւր տկար որդուն՝
Բժիշկն ասումէ, ուստի՞ բուսար դուն։

—

Առումեն, ասում, շատ բան են ասում,
Ասելով միայն օրեր են անցնում,
Օդը վարակուած է ասելներով,
Եւ վարակումէ ասելու ցաւով։

Մեր խեղճ գիւղացուն ցարդ ո՛վ է օգնել,
Կամ վէրքի վերայ սպեղանի դրել.
Պէտքէ հառաչէ թշուառ գիւղացին,
Հեծէ ու կոծէ՝ մինչ իւր օր վերջին . . . .

Գրաշար Ներսէս Տէր Աւետիքեանց.